ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/2 «08» 01 2026թ.

ԱՆԻՄԵԴ ՍՊԸ (ՀՎՀՀ 09221601)
Հասցե՝ ք. Երևան, Ռոստովյան 13/81շ, բն. 94,
Հեռ.՝ +37441551616, էլ.հասցե՝ animedllc@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և ԱՆԻՄԵԴ ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 02.05.2025 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-77-5 ծածկագրով «առողջապահական և լաբորատոր նյութերի» ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը չի կատարել ստանձնած պայմանագրային պարտավորությունները, մասնավորապես՝ Պայմանագրի շրջանակներում Վաճառողը Պայմանագրի մատակարարման վերջնաժամկետին Գնորդին պետք է հանձներ 33, 34, 35, 37, 38, 39, 40, 41, 42-րդ և 43-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքները, սակայն վերոնշյալ չափաբաժինների ապրանքները չեն մատակարարվել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և ԱՆԻՄԵԴ ՍՊ ընկերության միջև 14.05.2025 թվականին կնքված «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-77-5» ծածկագրով պայմանագիրը: Պայմանագիրը կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

ԱՆԻՄԵԴ ՍՊ ընկերությանը տրվում է 5 օրացուցային օր իր կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներ՝ 23 700 /քսաներեք հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ որակավորման ապահովման և 18 000 /տասնութ հազար/ ՀՀ դրամ պայմանագրի ապահովման համար ներկայացված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության «900005000758» գանձապետական հաշվին փոխանցելու նպատակով, ինչպես նաև Պայմանագրի 6.2 կետով սահմանված տույժ՝ 131 աշխատանքային օրերի նկատմամբ, որը կազմում է 4 809 /չորս հազար ութ հարյուր ինը/ ՀՀ դրամ և Պայմանագրի 6.3 կետով սահմանված տուգանքը, որը կազմում է 367 /երեք հարյուր վաթսուն յոթ/ ՀՀ դրամ՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ներքին գործերի նախարարություն՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու և վճարման կտրոնները չներկայացնելու դեպքում ԱՆԻՄԵԴ ՍՊ ընկերությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության

տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին, իսկ Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով կներկայացվի «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերություն վերոնշյալ գումարները գանձելու նպատակով:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Սարգսյան
Հեռ.՝ 010-59-61-52